

Թիւն: Ու բառ, ու բառ, ու բառ: Ու վէճ: Վէճին հետ ան-
խելք, անախորժ ալ պատահարներ, այսինքն՝ թեթեւ
հրմշտութիւն, սաստ, շարժուձեւային արհամարհանք, բոլո-
րը՝ առանց կանխամտածութեան, այսինքն՝ շեշտով մը,
որ անոնց բնականն էր, ամէնօրուանը: Ինչպէս չյիշէր
խոշտանգուող Մաթիկ Մելիքիսանեանցը սքանչելի
Մոսկուան -օրը նուազագոյն յիսուն անգամ այդ քաղաքը
կ'եկէր գործիչին բերանէն - անոր ընդարձակ սալոնները,
լեփ-լեցուն խարտեաչ ու խելացի բազմութեամբ, մա՛-
նաւանդ խարտեաչ ու խելացի վիճաբանութիւններով,
որոնք լսելը վայելք էր ականջին, ոչ թէ չարչարանք, ինչ-
պէս չէր քաշուեր բանաձեւելէ անոնց բիրտ, եռանդուն,
կրքոտ եղանակներուն տպաւորութեան ներքեւ: Չծեծե-
ցին, վասնզի կը յարգէին՝ իր անձին վրայով, անկէ ան-
դին՝ Մարմինը, որուն ներկայացուցիչն էր անիկա: Կը
յարգէին յեղափոխութիւնը, որ իրեն գլխաւոր մարդ
ընտրած էր իրենց գաւառը: Քաղաքները միշտ կը շահին,
երբ մարդ մտնէ-եկէ անոնց մէջ: Անիկա պարտաւոր-
ւեցաւ ընկրկիլ իր փաստերէն, լռել օր մըն ալ ինքնաբոյս
հռետորներու այս փաղանգին դէմ, որ Շաբաթ գիշերնե-
րը կը կազմուէր, գեղերէն քաղաք խուժող ուսուցիչներու
համադրումովը: Ու կը զարմանար ինքնաբոյս սա ընկե-
րաբաններուն միակտուր դատարկութեան վրայ, որոնք
իրենց վարժապետին չափ ալ չէին ուսումնասիրած այդ
փշոտ հարցերը: Վանը հեռու է Բիւզանդիոնէն, բայց մեր
նախնիքները հոն սորվեցան յամառութիւնը, յաւակնու-
թիւնը, հերձուածի մէջ խորութիւնը: Մենք դարերով կա-
րօտն ենք ապրեր ուժգին վերացումներու, մեր դժնդակ
կենցաղին մշտանորոգ ողբերգութեամբը միշտ ալ
արգիլուելով: Կրօնք փնտռելը, ինչպէս մեծ գաղափարի
մը ետեւէն մեր խօլ սուղումը բաւական փաստեր են այդ
ծարաւին:

Ընկեր Մաթիկը կենդանի գծագրութեամբ պատկե-
րացուց այդ տղոց տժգունելու աստիճան կրքոտ նայ-
լածքը, թուքերը, աղմուկի մէջ հաճ ընտանութիւնը: